ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11

09 հուլիսի 2025 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 15 անդամներ:

Բացակա էր՝ Ռուզաննա Թամազյանը, Հրանտ Հախվերդյանը, Տիգրան Պապոյան, Արամայիս Խանդամիրյան

Ավագանու նիստին մասնակցում էին՝ Արթուր Մանուկյան, Գոռ Հովվյան, Սամվել Թորոսյան,Կարինե Սիմոնյան, Նաիրա Տիտանյան , Լիանա Կոստանդյան , ՀՈԱԿ-ների ներկայացուցիչներ

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Ղումաշյանը

Նիստը արձանագրում էր ՝ ՀՀ Լոռու մարզի Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հեղինե Ճիճիլյանը

Մինչ ավագանու նիստի օրակարգը հաստատելը Ալավերդի համայնքի ղեկավար Դավիթ Ղումաշյանի առաջարկով և օրակարգային հարցերին ավելացվեց ևս 2 հարց ՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Շամլուղ քաղաքի վարչական սահմանում գտնվող, կադաստրային քարտեզի 06-005-0301-0112 ծածկագրով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելու մասին.

2. Օրինական ճանաչված կառույցները և համապատասխան հողամասերը՝ տվյալ կառույցներն իրականացրած անձանց գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) օտարելու մասին **Ավագանին միաձայն կողմ քվեարկեց հարցերի՝ օրակարգում ընդգրկելուն**

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 09-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ԹԻՎ 11 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ /ԶԵԿ.՝ Դավիթ Ղումաշյան /

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի Є-րդ մասի՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու՝ 2025 թվականի հուլիսի 09-ի արտահերթ թիվ 11 նիստի հետևյալ օրակարգը.

1.1 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու՝ 2025 թվականի հուլիսի 09-ի արտահերթ թիվ 11 նիստի օրակարգը հաստատելու մասին.

1.2 Ալավերդի համայնքի հողային հաշվեկշիռը հաստատելու մասին.

1.3 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի՝ 2025 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին.

1.4 Ալավերդի համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթաց սկսելու մասին.

1.5 «Ճոճկանի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի՝ 2025 թվականի հաստիքացուցակում փոփոխություն կատարելու մասին.

1.6 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Շամլուղ քաղաքի վարչական սահմանում գտնվող, կադաստրային քարտեզի 06-005-0301-0112 ծածկագրով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելու մասին.

1.7 Օրինական ճանաչված կառույցները և համապատասխան հողամասերը՝ տվյալ կառույցներն իրականացրած անձանց գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) օտարելու մասին:

1. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 113-Ա/

Լսեցին՝

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ.՝ Լ. Կոստանդյան /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀԱյաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը

կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով սահմանված կարգով՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Ալավերդի համայնքի հողային հաշվեկշիռը 2025 թվականի հուլիսի 01-ի դրությամբ՝ համաձայն N 22 և N 22ա ձևերի :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 114-Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ՝ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ /Զեկ.՝ Սամվել Թորոսյան /

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետերի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35–րդ հոդվածի 1-ին մասի՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Ի գիտություն ընդունել Ալավերդի համայնքի ղեկավարի հաղորդումը 2025 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 115-Ա/

Լսեցին՝

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ /Զեկ.՝ Կարինե Սիմոնյան/

1. Ալավերդի համայնքում սկսել 2025 թ-ի մասնակցային բյուջետավորման գործընթաց:

2. Ալավերդի համայնքի 2025 թ-ին բյուջեում հատկացնել 6.000.000 ՀՀ դրամ գումար՝ 2025 թ-ի ընթացքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու նպատակով:
3. Յուրաքանչյուր առաջարկ-նախագծի իրականացման համար սահմանել առավելագույն սահմանաչափ՝ 3.000.000 ՀՀ դրամ:
4. Սահմանել մասնակցային բյուջետավորման առաջարկների նախնական գնահատման աղյուսակի ձևաթուղթը՝ համաձայն հավելվածի:
5. Սահմանել, որ քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցողների առնվազն մեկ տոկոսի կողմ ձայների դեպքում առաջարկ-նախագիծը համարվում է հաղթած:
6. Համայնքի ղեկավարին՝
   1) սույն որոշման 1-ին կետում սահմանված գործընթացը՝ որպես ծրագրային բաղադրիչ, ներառել համայնքի 2025-2027թթ-ի ՄԺԾԾ-ում, տարեկան աշխատանքային պլանում և բյուջեում:
   2) համայնքի բնակիչների կողմից քվեարկության արդյունքում ընտրված առաջարկը(ները) ներկայացնել ավագանուն:
   3) իրականացնել վերահսկողություն մասնակցային բյուջետավորման գործընթացի նկատմամբ:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 116-Ա/

Լսեցին՝

«ՃՈՃԿԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՀՈԱԿ-Ի՝ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ.՝ Ն. Գրիգորյան /

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետով, 33-րդ հոդվածով՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. «Ճոճկանի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի՝ 2025 թվականի հաստիքացուցակում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 հուլիսի 01-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 117-Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՄԼՈՒՂ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-005-0301-0112 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ /Զեկ.՝ Լ.Կոստանդյան /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառարավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ սահմանված կարգով, Հայաստանի Հանրապետության կառարավարության 17.06.2021թ. N 987-Ն որոշման հավելվածի -ին կետի 3) ենթակետով, հիմք ընդունելով «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» բաց բաժնետիրական ընկերության կողմից տրված դիմումը, համայնքային սեփականության իրավունքի 17072024-06-0033 վկայականը, ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 10.06.2025թ. N 2/փ-173 դրական եզրակացությունը՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Շամլուղ քաղաքի վարչական սահմանում գտնվող, համայնքային սեփականության 06-005-0301-0112 ծածկագրով, գյուղատնտեսական նպատակային նշանակության 0.0108 հա մակերեսով արոտավայրը փոփոխել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր նպատակային նշանակության, կապի հողեր գործառնական նշանակության՝ բջջային կապի կայանի կառուցման ու սպասարկման համար:
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 118-Ա/

Լսեցին՝

ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ՝ ՏՎՅԱԼ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ) ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ /Զեկ.՝ Լ.Կոստանդյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշման պահանջներով, Հայաստանի Հանրապետության 19.11.2019թ. 225-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 04.06.2020թ. N 1023-Ն որոշումով, հիմք ընդունելով Ալավերդի համայնքի ղեկավարի 24.01.2025թ. N 169-Ա, 27.12 2024թ. N 1931-Ա, 05.12.2024թ. N 1807-Ա, 24.01.2025թ. N 173-Ա, 13.12.2024թ. N 1843-Ա, 28.02.2025թ. N 386-Ա, 19/05/2023թ N 644-Ա և 31/05/2023թ. N 680-Ա, 19.12.2023թ. N 1446-Ա, 02.06.2025թ. N 886-Ա և 20.06.2025թ. N 887-Ա որոշումները, սեփականության

իրավունքի N 14022025-06-0003, N 19022025-06-0052, N 26022025-06-0005, N 26022025-06-0007, N 11032025-06-0035, N 11032025-06-0038, N 07042025-06-0067, N 05112025-06-0020, N 11062025-06-0080 և N 25062025-06-0051 վկայականները, հաշվի առնելով, որ կառույցներն իրականացրած անձանց կողմից ընդունվել են ուղղակի վաճառքով գնելու առաջարկը՝

համայնքի ավագանին որոշում է.

1. ՀՀ Լոռու մարզ, համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս 3/1 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի ղեկավարի 24.01.2025թ. N 169-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 137.7 քմ արտաքին մակերեսով տնտեսական սենյակով ավտոտնակը սահմանված դրույքաչափին համապատասխան արժեքով և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0.00671 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 06-002-0150-0428/ ուղղակի վաճառքով, կադաստրային արժեքով օտարել Վահրամ Սերգոյի Քառյանին
2. ՀՀ Լոռու մարզ, համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սայաթ-Նովայի փողոց 7/6 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի ղեկավարի 27.12.2024թ. N 1931-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 44.3 քմ արտաքին մակերեսով նկուղով ավտոտնակը սահմանված դրույքաչափին համապատասխան արժեքով և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0.00293 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 06-002-0027-0257/ ուղղակի վաճառքով, կադաստրային արժեքով օտարել Մանվել Սիմոնի Դավթյանին:
3. ՀՀ Լոռու մարզ, համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Երևանյան խճուղի 61 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի ղեկավարի 05.12.2024թ. N 1807-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 18.0 քմ արտաքին մակերեսով խորդանոց սահմանված դրույքաչափին համապատասխան արժեքով և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0.00181 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 06-002-0007-0028/ ուղղակի վաճառքով, կադաստրային արժեքով օտարել Արարատ Վասիլի Վարդանյանին
4. ՀՀ Լոռու մարզ, համայնք Ալավերդի, գյուղ Թեղուտ, 2-րդ փողոց, 2-րդ փակուղի 2 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի ղեկավարի 24.01.2025թ. N 173-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 139.0 քմ արտաքին մակերեսով անասնաշենքերը սահմանված դրույքաչափին համապատասխան արժեքով և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0.0417 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման կամ այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 06-037-

0009-0012/ ուղղակի վաճառքով, կադաստրային արժեքով օտարել Արթուր Մարտունի Փարեմուզյանին:

5. ՀՀ Լոռու մարզ, համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին կայարան թաղամաս, 12/6 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի ղեկավարի 13.12.2024թ. N 1843-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 36.8 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը սահմանված դրույքաչափին համապատասխան արժեքով և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0.003686 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 06-002-0201-0036/ ուղղակի վաճառքով, կադաստրային արժեքով օտարել Հայկ Ռոբերտի Թամազյանին:
6. ՀՀ Լոռու մարզ, համայնք Ալավերդի, Քարկոփ գյուղ, 1-ին փողոց, 6/13 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի ղեկավարի 28.02.2025թ. N 386-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 50.4 քմ արտաքին մակերեսով անավարտ ավտոտնակը սահմանված դրույքաչափին համապատասխան արժեքով և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0.00504 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 06-111-0004-0114/ ուղղակի վաճառքով, կադաստրային արժեքով օտարել Մարինե Անանունի Բաղդասարյանին:
7. ՀՀ Լոռու մարզ, համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Թումանյան փողոց 81/1 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի ղեկավարի 19.05.2023թ. N 644-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 90.6 քմ արտաքին մակերեսով առևտրի սրահը սահմանված դրույքաչափին համապատասխան արժեքով և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0.00906 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 06-002-0039-0011/ ուղղակի վաճառքով, կադաստրային արժեքով օտարել Գայանե Սենիկի Իսրյանին:
8. ՀՀ Լոռու մարզ, համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս 16/10 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի ղեկավարի 19.12.2023թ. N 1446-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 44.6 քմ արտաքին մակերեսով նկուղով ավտոտնակը սահմանված դրույքաչափին համապատասխան արժեքով և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0.00376 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 06-002-0150-0241/ ուղղակի վաճառքով, կադաստրային արժեքով օտարել Զոյա Վոլոդյայի Հովհաննիսյանին:
9. ՀՀ Լոռու մարզ, համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սայաթ-Նովայի փողոց 1/14 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի ղեկավարի 02 06.2025թ. N 886-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 97.7 քմ արտաքին մակերեսով նկուղով ավտոտնակը սահմանված դրույքաչափին համապատասխան արժեքով և սպասարկման ու

պահպանման համար օգտագործվող 0.0039 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 06-002-0027-0259/ ուղղակի վաճառքով, կադաստրային արժեքով օտարել Սեյրան Սերյոժայի Անթանեսյանին:

10. ՀՀ Լոռու մարզ, համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Էնգելս թաղամաս, 6/2 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի ղեկավարի 20.06.2025թ. N 887-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 23.7 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը սահմանված դրույքաչափին համապատասխան արժեքով և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0.00237 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 06-002-0048-0042/ ուղղակի վաճառքով, կադաստրային արժեքով օտարել Ռոբերտ Ռաֆիկի Մարգարյանին:
11. Առաջարկել Ալավերդի համայնքի ղեկավարին՝ կառույցներն իրականացրած անձանց հետ կնքելու կառույցի և զբաղեցրած հողամասի ուղղակի վաճառքի պայմանագրեր:
12. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 119-Ա/

Ավագանու անդամներ՝

ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՐԵՆ ԴԱԼԼԱՔՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ԵՐԻՑՅԱՆ

ՖԼՈՐԱ ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ

ՀՐԱՆՏ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ

ՀԱՅԿ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՁԱՎԱՐՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ՂՈՒԼՅԱՆ

ՄԿՐՏԻՉ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

ԼՈՐԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ՍՄԲԱՏՅԱՆ

ՍԻՄՈՆ ԶԱԽԱՐՈՎ

ՆԱՐԻՆԵ ԹՈՐՈՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԷԼԲԱԿՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՊԱՊՈՅԱՆ

ԱՐԱՄԱՅԻՍ ԽԱՆԴԱՄԻՐՅԱՆ

ՌՈՒԶԱՆՆԱ ԹԱՄԱՋՅԱՆ

Համայնքի ղեկավար՝

ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ ՀԵՂԻՆԵ ՇԻՇԻՆՅԱՆԸ

_____